

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011թ. հիմնական միջոցառումների պլանի համաձայն ս/թ. սեպտեմբերի 7-ին իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն „Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում,, թեմայով:

2. Ուսումնավարժությանն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմին, տարահանման հանձնաժողովին, մարզային փրկարարական վարչությանը, Ճամբարակ և Վահան համայնքների քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմին:

3. Կազմավորել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով.

փ/ծ գնդապետ Բարսեղյան Մ. – մարզային փրկարարական վարչության պետ, շտաբի պետ

փ/ծ փոխգնդապետ Աբրահամյան Հ. – մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, շտաբի պետի տեղակալ

փ/ծ կապիտան Օհանյան Ռ. – մարզային փրկարարական վարչության Ճամբարակի ՀՓՁ հրամանատար

փ/ծ լեյտենանտ Գորոյան Վ. – մարզային փրկարարական վարչության օպերատիվ բաժնի հրահանգիչ

Ավալյան Յու. – Ճամբարակի քաղաքապետ

Բալյան Գ. – Վահան համայնքի ղեկավար

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ փ/ծ գնդապետ Մ. Բարսեղյանին՝ մշակել և մինչև ս/թ. հուլիսի 18 -ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման օրացուցային պլանը: Ուսումնավարժությանն անհրաժեշտ այլ փաստաթղթերը մշակել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանին համապատասխան: Ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել ինձ մինչև ս/թ. օգոստոսի 30-ը:

5. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Գ. Ստեփանյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

